ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 21 ՄԱՐՏԻ 1879 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 21 ՄԱՐՏԻ 1879

№ 22 ՓԱՍՏԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 22

ԳԱՁԱՏԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ ԱՄԵՆ 10 ՄԻԶԱԿ ՏԱՌԵՐԻ ՎՃԱՐՆ Է 1 ԿՈՊԵԿ։

ԳԱՁԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ-ԵՆ ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ։

ՄԵԼՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՇԱԲԱԹԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԱՆԱԲԱԹ ՕՐԵՐԸ։ ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է 8 Ռ.

ՕՏԱՐԱՖԱՂԱՓ. ԴԻՄՈՒՄ ԵՆ ՈՒՂՂԱԿԻ ԸՆ ՌԵԴ. ԳԱԶԵՏԻ „ПЧЕЛА АРМЕНИИ“ Г. Тифлисъ.

ԹԻՖԼԻՋ 21-ՒՆ ՄԱՐՏԻ

—

Արդէն յայտնուած է պրակտուԹեան միջոցով, որ երկուական փաստաբան պ. Սինկըերիմ Արծրունին ուսումնասիրում է «Մուրատեան ուսումնարանի» խնդիրն և ընդ նմին հանգուցեալ Սամուէլ Մուրատի կտակի և սորա իրագործուԹեան պատմուԹիւնը, որոյ հետևանքն եղաւ երկու միլիոնից աւելի ֆրանկի հրնտակ յօգուտ հայ ազգի աղքատ և որբ աղջոց։

Յայտնի է նմանապէս, որ պարոն Ս. Արծրունու առաջարկուԹեամբ ընդխոսումը կազմվեցաւ իրաւագիտաց և պատմաբանից առանձին մանաժողով ընդ նախագահուԹեամբ Թեմական առաջնորդ գաբրիել արքեպիսկոպոսի։ Մանաժողովն ունեցաւ մի նիստ և լսեց պ. Արծրունու ազատ զեկուցումն, որոյ մասին աւելորդ չէր լինիլ առաջ բերել այստեղ քանի մի կարծիքներ։

Մուրատեան վարժարանի և Սամուէլ Մուրատեանի կարճառօտ պատմուԹիւնքը հետևեալքն են.

Ի 20 ապրիլի 1816 ամի Հընդկաստանի Մատրաս քաղաքում մեռնում է հայ կաթոլիկ Ագա Սամուէլ Մկրտչեան Մուրատ և Թողնում է մի կտակ, որով վեց երորդ յօգուտ ծում ասուած է, որ նա Թողնում է որոշեալ գումար, որ այժմ 4—5 միլիոնի կհասնի, Հայոց ազգի խեղճ և որբ մանկանց համար վարժարան հիմնելու ըստ խորհրդոյ և միջնորդուԹեան Վենետկի Հայ միաբանուԹեան։

Այդ հրնտակի գումարը երկու կտակակատարներն, Աղէքսանդր և Էդուարդ Ռաֆայէլեանք, պարտաւոր էին գործ դնել գետին գծելու համար Եւրոպայի մի կողմը, որ նորա արդիւնքով կարելի լինի Հայ Թիվ վարժարանի պիտոյքը։ Վենետիկի միաբանուԹեան անդամ Հայր Սարգիս Թէոդորեանը երկու անգամ ճանապարհորդեց դէպի Հնդկաստան (Մատրաս) և այնտեղ դատաստանի միջոցաւ Սամուէլ Մուրատեանի ժառանգներից ստացաւ կտակեալ գումարը։ Սրանից յետոյ Մխիթարեան միաբանուԹիւնը հիմնեց ուսումնարան պատուայ քաղաքում և երկիւղ կրելով Աւստրիայի կառավարուԹիւնից, որ միաբանուԹիւնից հաշիւ կը պահանջէր նորա ծախսի և գործունէուԹեան մասին վերաբերուԹեամբ վարժարանին, Վենետիկի միաբանները փախուցին դպրոցը Փարիզ։ Այստեղ նմանապէս կառավարուԹիւնը նրանցից հաշիւ էր պահանջում, այդ պատճառաւ միաբանուԹիւնը կամեցաւ տեղափոխել վարժարանը Պօլիս։ Այդպէս եւեց ուսումնարանի խնդիրը մինչև Ֆրանկ—պրուսական պատերազմը, երբ փարիզում փակվեցաւ ուսումնարանը և այնտեղից նորա իշխանքը միաբանուԹիւնը ստացաւ Հռոմ ի Հաճոյս պապի։ Ուսումնարանը կառավարելու համար յիշեալ արեղաններըը գնեցին Խաստիայում ահագին տարածուԹեան գետին, գնեցին փարիզում մի պալատ տալով 400,000 ֆրանկից աւելի, շինեցին տուն պատուայում 25 հազար ֆրանկից աւելի ծախսելով նորա վերայ։ Մինչև ֆրանկ—պրուսական պատերազմը Մուրատեան վարժարանում կրթվում էին Հայ լուսաւորչական երեխայք։ Իսկ դորանից յետոյ Հայ լուսաւորչականների համար այդ ուսումնարանի դռները միանգամայն փակ են։ Վերդրեալ համառօտ պատմուԹեան նկատմամբ, իրաւաբանների մանաւանդ քննադատեց պ. Ս. Արծրունու առաջ բերած հետևեալ խնդիրները.

1) Ունին արդեօք իրաւունք Հայ—լուսաւորչականները համարել իբրեանց ժառանգ Սամուէլ Մուրատեանի կտակեալ գումարի։

2) Ձէն կորուսել արդեօք Հայ—լուսաւորչականները այդպիսի իրաւունքը որոնելու և պահանջ յայտնելու։

3) Ունին իրաւունք արդեօք մի և նոյն Հայք Հաշիւ պահանջել վենետկի միաբանուԹիւնից։

4) Գիտական և իրաւաբանական Հայեացքով ինչ դեր է պատկանում միաբանուԹեանը կտակը կատարելումը։

5) Կարելի՞ է արդեօք վենետկի միաբանուԹեանը միանգամայն հեռացնել, կտակի զօրուԹեամբ, վարժարանին մասնակցելուց։

6) Կարելի է արդեօք, ըստ օրինաց և ըստ կտակի իմաստին և նպատակին, հիմնել ուսումնարան փոքր Ասիայումը, կամ կենդրոնացնել նորան Պօլսումը, իր բազմաթիւ բաժանմունքներով Հայաստանի զանազան քաղաքների մէջ։

1) Ո՞վ կարող է համարվել, ըստ միջազգային օրինաց, ներկայացուցիչ Հայոց որբ և աղքատ մանկանց իրաւանց և այլն։

8) Ո՞րան պէտք է, եթէ կարիքն ստիպէ, դատ բաց անել վերոգրեալ իրաւունքը պաշտպանելու և իրագործելու համար։

Այդ խնդիրները վճռվեցան, իրաւաբանների առաջին նիստումը հեռևեալ կերպով։ Առաջին երկ խնդիրները — դրականօրէն, չորրորդը — Թէ միաբանուԹեանը ոչինչ նուիրաԹական կամ սեփականուԹեան դեր չէ տուած կտակվ. հինգերորդը և վեցերորդը — ղրականապէս. եօԹներորդը բարդ խնդիր գոլով՝ միաձայն վճիռ առ ժամանակ չէ ստացել, և ուԹերորդը — Թէ դատը պէտք է բաց անել Անգլիացւոց դատարաններում։

ԳրականուԹիւնը առ այժմ իր պատասխանատուԹիւնը կհամարէ յայտնել իր կարծիքը այդ խնդրի մասին։ ԵԹէ մանաժողովի կարծիքը ճշմարիտ է և իրագործվի, այնուհետև Հայաստանի յաղԹուԹիւնը այն ամեն չարիքների վերայ, որոնց դէմ նա պատերազմում է, արդէն ապահոված կարելի է համարել։

Ազգի ներկայ աղքատուԹեան ժամանակ այսպիսի նշանաւոր գումարը մեծ դեր կարող է խաղալ նորա զարգացական գործի մէջ։ Ուստի և Հայ ազգի վերայ բարոյական պարտք կայ ամեն միջոց գործ դնել, ամեն տեսակ զոհաբերուԹիւն անել այդ Հարցի յօգուտ ազգին վճռվելուն, քանի նորա համար պարզ է, որ դպրոցները նրան պիտի տան այն, ինչ որ նա սպասում ու որոնում է վեհաժողովներից, յեղափոխուԹիւններից և բարեկործուԹիւններից Հայ զարգները Հայաստանում պիտի զգալն ամեն բանում կարիք քրդերի և այլ բարբարոս տարրների և նրանց բարեկամ և հնազանդ անեն Հայոց Հանճարի և աշխատանքի առաջ

ԱՂԵՔՍԱՆԴՐՕՊՕԼ.

(Ընկերակցին «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» Լրագրի)։

—

Ցուր անզգամին պատասխանի ըստ անզգամուԹեան նորա, զի մի իմաստնագոյն երեւեսցի յանձն իւր։

Սողոմոն։

—

«Մշակի» վերջին համարները մի կատարեալ արշաւանաք են սկսել Աղէքսանդրօպօլու ուսուցչաց և հոգաբարձուաց դէմ։ Լաւ էր, եԹէ այդ սանմանափակուէր միայն նոցա անձնաւորուԹեամբ. ոչ, նա հնդնվում է այն ուսումնարանների վերայ ևս, ուր նոքա ծառայում են։ ԵԹէ վայել է, որ ամեն բան իր չափն ունենայ, ուրեմն երկայնամտուԹիւնն էլ պէտք է իր չափն ունենայ։

Ցիշեալ լրագրի 32 համարում մի ոմն Ափրիկեցի Աղէքսանդրօպօլի դիմին իր երեմիականը պարզելուց յետոյ՝ նախատում է «մի քանի» ուսուցիչների ԹղԹամոլուԹեան մէջ և առանձին իմն դառնուԹեամբ ճանկռտում է ուսուցիչ Ա-ի երեսը։ Ափրիկեցու պատմուԹեամբ պ. Ա-ն յայտնի էր հոգաբարձուԹեանը իւր վատ վարքով և ուսուցիչ ընդունուելուս վարքն ուղղելու պայմանով, սակայն նա «և չար գործ դնելով հոգաբարձուԹեան հաւատարմուԹիւնը, մոլուԹիւնից մոլուԹիւն է գլորվում»։

Նոյն լրագրի 33 համարում երկու աստղը (**) սարսափելի յանդիմանուԹիւններ է անում ուսուցիչների գլխին ԹղԹամոլուԹեան համար։ Ցետոյ նա հիանում է վարդանանց ոճի հանդիսաւորուԹեամբ (որ փառաւորապէս կատարվում էր երևի նոյն աստղերի աշխատուԹիւններով), տեղեկանում է Տիգրանեանց եղբարց ընծայարերուԹեան մասին յօգուտ «Ահականուչեան Դպրոցին և հետաքրքրվում է այցելել այդ ուսումնարանը։ Այդտեղ նա իւր ծակամուտ հետաքննուԹիւններից եղրակացնում է, որ «այդ ուսումնարանի համար ուսուցիչները աշխատում են միայն նորա դանձարանը հարստացնելով, իսկ աշակերտների մէջ յառաջադիմուԹեան նշոյլն անգամ չէ երևում... և աշակերտները տան խոնարհուԹեան և ուսուցիչների անհոգուԹեան պատճառով մտաւորապէս վնասվում են»։ Իմանալով, որ ուսուցիչներն այնտեղ ձրի են դասախօսում՝ նա մաքուն արդարացնում է նոցա անհոգուԹիւնը, ուստի ցանկանում է վարձատր առպարիզում տեսնել նոցա գործունէուԹիւնը. գնում է վճռական ուսումնարանը։

Այստեղ էլ նոյնպէս ախուր եղրակացուԹեան գալով, «մտածում է, Թէ ուսումնարանը հոգաբարձուԹիւն չունի արդեօք, և եԹէ ունի ինչ են անում որ ուսումնարանի վերայ չեն հոգում. հոգաբարձու են դառնում և ոչինչ չեն վերնում..... ամեն բան յանձնել են վարժապետներին, իսկ սրանք ինչ որ ուզում են, անում են. դասի չեն գալիս, քնում են, ԹուղԹ են խաղում և այլն և այլն, իսկ հոգաբարձուԹիւնը չը դիտէ այս բանը, որովհետև նրանք չեն այցելում ուսումնարանը. ուսուցիչներից մի քանիսը Թող են փչել նրանց աչքում, որ եԹէ դան էլ, կոյրի պէս չեն տեսնի նորանց պակասուԹիւնները»։

Նախ և առաջ հարց. ինչ են ուզում հաստակացնել այդ ԹղԹակիցները ուսուցիչների ԹղԹախաղ ասելով. մԹԹէ այնպիսի մոլուԹիւն. որի մէջ նոքա իրը Թէ կաչկանդուել կապուել են անելանելի։ Այսպէս հաստատելը չարաչար զրպարտուԹիւն կը լինէր։ Իրաւ է, ուսուցչական մեծ խմբից մէկը միւսը (և ոչ մեծ մասը) երեք կամ չորս անգամ խաղացել են պատահական կերպով Թէ հրաւէրքի մէջ և Թէ հիւրանոցում, այս էլ բարեկենդանի արձակուրդին, և վերջ։ Ես ինքըս ԹղԹախաղ յարդողների կարգին չեմ պատկանում և ատում եմ դոցա բոլոր տեսակները, որովհետև ըստ իս ուրիշ օգտակար պրաղմունք միշտ կարելի է գտնել ժամանակը բաւականուԹեամբ անց կացնելու համար, բայց քանի որ մեր լուսաւորեալ կոչուած շրջանի մէջ ԹղԹախաղ չմացողն էլ վայրենու պէս մի մարդ է համարվում (խօսքս մոլուԹեան վերայ չէ ի հարկէ), ուրեմն այդ տեսակ զուարճուԹեամբ երբեմնապէս զբաւուող մարդկանց վերայ էլ խարազան վճիռ դնելը՝ անխղճուԹիւն է, եԹէ ոչ աւելի ինչ։ Սակայն մեր սրատես ԹղԹակիցներն էլ այս կը հասկանային և ղէպքերը լիապէս մեծացնելով՝ արշաւանք չէին սկսիլ, ոչ էլ այդ՝ հետևանք է անկեղծ սրտացաւուԹեան դէպի դպրոց, այլ այդ ամենի դրդիչ հրէշն է կրքի, հաշիւների և մանաւանդ Թէ ազգային ցուցամոլ ձգտումների գումարը։

Ջոր օրինակ, մի ժամանակ պարոն Ափրիկեցին վառվռան ցանկուԹիւն ունեցաւ Հոգևոր ուսումնարանում ուսուցիչ դառնալ. հանդամանքների չնորհիւ նորան յաջողեցաւ այդ, բայց մի չաբաթ չանցած իւր անպէտքուԹեան պատճառով ճամբու դրուեցաւ և նորա տեղը նշանակուեցաւ պ. Ա-ն, որ այն օրից մինչև այսօր կատարում է իւր պաշտօնը օրինակելի ճշդուԹեամբ և բարեխղճուԹեամբ։ Ահա և «արտաքսեալ ոգին» երկար և անպտուղ սրտամաշուԹիւնից յետոյ Թափում է նորա վերայ իւր չարախանձ զայրոյթի մաղձը, կամելով ողբալ տալ իւր անփոխարինելի կորուստը։ Սակայն Ափրիկեցին լինձ կը հաւատայ, որ պ. Ա-ն իւր դասատուական հեղինակուԹեամբ և բարքով այնքան բարձր է նորանից, որքան գուցէ լինքն Ափրիկեցին բարձր չէ իւր հայրենակից Զուլուներից, Սրանից աւել չարժէ խօսել Ափրիկեցիների հետ։

Ցետևենք այժմ աստղերի երկուորեակին ոմ է (կամ ոմք են. չը գիտեմ ինչպէս համաձայնեցնեմ)։ Ըստ երևուԹին նա լուսաւոր դաղափարներ ունի, ուզում է փայլել, ինչպէս որ աստղերին կը վայելէ. ուսումնարանական գործերով խոտ է հետաքրքրվում, այցելուԹիւններ է անում, աչխատում է լաւ գտնել ուսումնարանաց «մոծակները, հոտնիկներն ու մժղուկները»։ Բայց ինչպէս որ լինքն այդպիսի այցելուն ուից ցըգլուխ երևակայական է, չեզած ու չը տեսնուած, այնպէս էլ նորա պատմածների մեծագոյն մասը հոդմային է ու մըտացածին։ Հարցրէք Սահականուչեան ուսումնարանի Հայոց լեզուի ուսուցիչ վ. Գեոնդեանցից, — այդպիսի այցելու չէ ունեցել երբէք և բայի. լինքն իրան հետ խօսելուց՝ ոչ ոքի հետ պատիւ չէ ունեցել խօսակցելու. հարցրէք երգի ուսուցիչ Ա. Ալամանեանցից, — նա էլ չի տեսել երբէք։ Ուրեմն ԹղԹակցի ոգին ու բողոքը լինչի վերայ է հիմնուած, — դարձեալ կրքերի, դարձեալ հաշիւների ու խարդախուԹեան։

Նա էլ հարուածում է Ափրիկեցու նըման ուսուցչաց ոմանց ԹղԹախաղուԹիւ-

ՊԱՏՄՎԱԾՔ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ա. Ա. Տարոնցի

Ա. Ա. Տարոնցի «Պատմվածք պատմության» վերնագրով իր գրքում ներկայացնում է պատմության ուսուցման մեթոդիկայի հարցերը։ Գրքում քննվում են պատմության դասավանդման նպատակները, սկզբունքները, ձևերն ու միջոցները։ Հեղինակը կանգ է առնում նաև պատմական նյութի ընտրության, դասի պլանավորման, տարբեր տիպի դասերի կազմակերպման հարցերի վրա։

Գիրքը նախատեսված է ուսուցիչների համար։

Գինը 1 ռ. 50 կ.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ա. Ա. Տարոնցի

Ա. Ա. Տարոնցի «Հայ ժողովրդի պատմություն» գրքում ներկայացված է հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 1917 թվականը։ Գրքում լուսաբանված են հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական, մշակութային զարգացման հիմնական հարցերը։

Գիրքը նախատեսված է ուսուցիչների համար։

Գինը 1 ռ. 50 կ.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ա. Ա. Տարոնցի

Ա. Ա. Տարոնցի «Հայ ժողովրդի պատմություն» գրքում ներկայացված է հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 1917 թվականը։ Գրքում լուսաբանված են հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական, մշակութային զարգացման հիմնական հարցերը։

Գիրքը նախատեսված է ուսուցիչների համար։

Գինը 1 ռ. 50 կ.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ա. Ա. Տարոնցի

Ա. Ա. Տարոնցի «Հայ ժողովրդի պատմություն» գրքում ներկայացված է հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 1917 թվականը։ Գրքում լուսաբանված են հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական, մշակութային զարգացման հիմնական հարցերը։

Գիրքը նախատեսված է ուսուցիչների համար։

Գինը 1 ռ. 50 կ.

Ա. Ա. ՏԱՐՈՆՑԻ

ՎԱՆԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՏՈՐ Ա.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՏՊԱՐԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆՑ
1879

Տպագրեալ է Վաղարշապատ, ի տպարանի Մատթէոսեանց, 1879 թուին։

Ի Տպարանի Մատթէոսեանց ի Վաղարշապատ կարելի է գտանել զայս գիրս։

ՆԱԽԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ի ժամանակս, յորում ես սկսայ գրել զՊատմութիւն Վանայ, ոչ ոք ինձ ասաց, թէ ինչ ես գրեմ, այլ ես ինքս ինձ ասացի, թէ ինչ գրեմ։ Ես գրեցի զայն, զոր ես ինքս տեսի, կամ զոր ես ինքս լսեցի, կամ զոր ես ինքս գտի։ Ես գրեցի զայն, զոր ես ինքս կարդացի, կամ զոր ես ինքս ուսայ։ Ես գրեցի զայն, զոր ես ինքս գրեցի, կամ զոր ես ինքս ստացայ։ Ես գրեցի զայն, զոր ես ինքս գրեցի, կամ զոր ես ինքս ստացայ։ Ես գրեցի զայն, զոր ես ինքս գրեցի, կամ զոր ես ինքս ստացայ։

են սոյն մասին բուն Հայաստանում ընդհանրապէս և Երուսաղէմայ տուրբ Յակոբեանց Հայոց վանքում մանաւանդ պարապէս։

Դաւիթ աւագ քահանայ Եարալեանց։

ԵՐԵԻԱՆ

(Թղթակցութիւն «ՄԵԼՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» Լրագրէն)

—

Այս ձմեռուանից աւազակութիւնը սաստկացել է Երևանայ չրջակայքումը այնպէս, որ չէ կարելի ասել, թէ չատ ապահովուած լինի մեր կողմերում մարդկանց կայքն ու կեանքը, մանաւանդ Հայ ժողովրդի, որի վերայ գլխաւորապէս դարձրած է չարագործների յարձակումները։ Թուրք աւազակների մի խումբ, փակելով Գալմա ասացեալ այգեքանց մէջ ճանապարհը, որտեղ քաղաքիցը տանում է դէպի Աբարանայ գաւառակը, քանիցս անգամ կողոպտեցին անց ու դարձ անող Հայ գիւղացիներին, իսկ վերջին անգամին, որ էր անցեալ յունվարի 3-ին նոքա, բացի սիրոյ դէպի այլոց ստացուածքը, արտայայտեցին նա մի հրէշային բնաւորութիւն, որն որ ցոյց է տալիս, թէ մահմետական մոլեռանդութիւնը մինչև որ աստիճան կարող է վերցնել մարդկանց բարոյականութիւնը։ Այդ օրը աւազակաց խումբը, թուով վեց հոգի, բռնում են հինգ գիւղացիք, մերկացնում են, ձեռն ու ոտը կապում և գցում մի այգւոյ մէջ ձեան վերայ։ Զանձրանալով նոր որսերի սպանման մէջ, աւազակները սկսում են զբաղուիլ բարբարոսական զուարճութեամբ՝ խեղճ և անմեղ կալանաւորներին մէկ մէկ կապում են ծառիցը և չէը նայելով նոցա խնդրանաց և աղաչանաց, որ խնայեն նոցա կեանքը և խղճան նոցա սպասող որդկերանցը, նոցա կըրծքի վերայ, ինչպէս նչանի, փորձում են իւրեանց հրացանների զօրութիւնը. գնդակի դատարկ բները, ընկած դիակների մօտ, ցոյց են տալի հրացանների պատկանում Պիպօդիչի սիստեմային։ Ջոհերից կրծորդի սպանման ժամանակին, նոցանից մէկը ինչպէս է լինում, աղատում է ոտները կապանքներից և տալիս է իրան փախստեան դէպի քաղաք։ Այս տեսնելով աւազակները՝ ժողովում են կողոպտած իրերը և փախչում, թողնելով կէնդանի հինգերորդ զոհին, որն որ իւր աղատութեամբ բոլորովին պարտական է փախչող ընկերոջ ճարպիկութեանը։

Այս եղեռնագործութեան ձայնը սաստիկ վրդովեց լսողներին և չատերը վազեցին դէպի սպանութեան տեղը, որի հետաւորութիւնն է քաղաքի կէնդրոնիցը ոչ աւելի երեք վերստից։ Շտապեցին այնտեղ և ոստիկանութեան ծառայողները և զոհն անմեղ զոհերին դեռ ևս տաք, բայց անչունչ, մարմինները ծառից կապած. իսկ նոցանից մէկին ձեան վերայ սառած, կիսակենդան դրութեան մէջ։ Աւազակներն անհետացան ողջ և անպատիժ.... Պ. Յիզ... սպանութեան տեղը հասած ժամին՝ իսկոյն մարդ ուղարկեց քաղաք և բերել տուեց 50 հետեակ զինուորներ, որոնք ցրուելով այգեքանց մէջ, սկսեցին քարերի և թփերի տակ որոնել ձիաւոր աւազակներին, այդ միջոցին աստ և անդ սաստիկ ճրչ, գոռոց և ծիծաղ, որոնց պատճառն էին վրդովուած և ազատութիւն պարտող նապաստակները։ Չնուողաց աչխատութեան հետևանքն այն եղաւ, որ եթէ սպանուածների տէրերը չը գան վրէժխնդրութիւն, գոնէ այգետէրերը առ ժամանակ ազատուեցան չորքոտանի թշնամիներից։

Այս իրողութիւնը միւս օրը փախըտեամբ ազատուող հայը, քաղաքի մէյդանումը պատահում է իւր երեկուայ մարդասպան ծանօթներից մէկին և խոյն բռնելով նորա ձեռքից՝ իմաց է տալիս չրջակայ մարդկանց, որոնք տանում են աւազակին քաղաքապետի մօտ. չարագործը, որին ճանաչում են և ուրիշ կողոպտածներ, լինում է երեանայ գաւառի ճանապարհապահ ձիաւորներից մէկը՝ 17 տարեկան թուրք։

Յունվարի կիսին Դաւալու և Օվչար (թուրքբաբնակ) գիւղերի մէջ սպանուեցան մեր քաղաքացի մի երիտասարդ հայի, որն որ գնացել էր բամբակ առնելու. նորա մերկացրած մարմինը գտանում են ընկած ճանապարհից հեռու։ Անցեալ օրը, որ էր ամսոյս (փետր.) 23-ն, 5 հոգի հայեր, եղուարդ գիւղացիք, երևանից գալիս են լինում իւրեանց տունը. քաղաքից եօթը վերստ հեռու կան հին աւերակներ, որոնց մօտով ընկած է եղուարդայ ճանապարհը. երբ գիւղացիք մօտենում են, յանկարծ բացվում են այնտեղից հինգ հրացաններ՝ ուղղած դէպի մէամիա ճանապարհորդներն. ամենն էլ ձիաթափ են լինում՝ չորսը անչունչ, մէկը կիսակենդան. այս վերջինս դեռ ես կենդանի է և ազատվում է նորանով, որ երբ աւազակները մօտենում են զոհերին կողոպտելու համար, սա ձևացնում է իբրև սպանած և աչքերը բաց է անում միայն այն ժամանակ, երբ սպանողները արդէն հեռացած են լինում դիակներից։ Ընթերցողը չը կարծի, թէ այս անգթի լուրը ստանալուն պէս քաղաքական կամ գաւառական ոստիկանութիւնը չտապից հնարքներ գործ դնել աւազակներին որոնելու համար. քաւ լեցի. այդ կառավարութեան ներկայացուցիչները ցայժմ ևս վիճում են իրարու հետ, թէ որի չրջանումն է այդ իրողութեան տեղը՝ քաղաքի թէ գաւառի։ Ինչ կարծիք, որ այս վէճը այժմ ունի նշանակութիւն միայն նոյն իսկ աւազակների համար, որոնք ի հարկ է, հետաքրքրվում կը լինեն իմանալ, թէ այսուհետև այդ վիճող կողմերի որիցը պէտք է ունենան երկիւղ... Այսպէս արիւնարբութեան կիրքը, որնոր առաջ սակաւ էր երևում մեր կողմերում, սաստկել է տեղական թուրքերի մէջ և սորան ոչինչ պատճառ չէ կարելի տալ, բացի վերջի պատերազմից, որի ժամանակ գրգռվեց տեղական մահմետականաց մոլեռանդութիւնը և ոխը դէպի քրիստոնեաները։

ԿԱՂԱՔԱԿԱՆ

Իրաւ է մի քանի հանգամանքներ տալիս են գուշակել քաղաքական աշխարհի վերաբերութեամբ ոչ ցանկալի խաղաղութիւնն, այլ վրդովվելից մօտակայ ապագայ, միայն դժուար թէ այս տեղի ունենայ։ Ամեն տէրութիւնք այժմ ունին իրանց ներքին հոգսերն, որոնք հոգալու համար մեծ ոյժ և կարողութիւն հարկաւոր է, այնքան որ դժուար է երևակայել անգամ թէ որ և է եւրոպական տէրութեան ոյժը պատի, թէ ներքին կարիքներն հոգալու և թէ արտաքուստ պատերազմ մղելու։ Մանաւանդ ծանր է ամենքի վրամական վիճակը։ Միայն Անգղիան այս կողմից կազմում է բացառութիւն։ Բայց նա այժմ երկու տեղ արդէն՝ Աֆրիկէյում Զուլուների դէմ և Ասիայում Աֆղանների դէմ պատերազմէ մղում ու ամբողջ Ասիական Տաճկաստանի հոգսն իւր վերայ է առած, որոնք հերիք ծանրութիւնք են, եթէ չիշելու անգամ չլինենք այն հոգացողութիւնը, որ տանը ունի։

Այս վիճակն է պատճառն, որ ամենքն էլ աշխատում են ծագվող դժուարութեանց առաջն առնել, որպէս զի Միրաւի եւրոպայի խաղաղութիւնը դէթ առժամանակ ապահովանայ և արևելեան հարցի մի մասի վճիռը հետաձգութիւն ստանայ։ Սորա համար զանազան առաջարկութիւնք և մտադրութիւնք առաջ եկան վերջին ժամանակ, որպէս զի այս կամ ասկրութեան բաւարարութիւն տրվի, ամենքն էլ գոհ մնան յօգուտ խաղաղութեան։ Այսպէս առաջարկվեցաւ Իտալիայի կողմից, որ կազմվի նոր դեսպանաժողով ուղղելու Համար Բերլինի դաշնագրութեան այն կետերն, որոնք անգործադրելի կամ դժուար իրագործելի են երևում և Ֆրանսիայի կողմից առաջարկվեցաւ, որ Բուլղարիայի իշխանը նշանակվի մի և նոյն ժամանակ և արևելեան Ռումելիայի կառավարիչ։

Յայտնի բան է այս երկու առաջարկութիւնքն էլ անիրագործելի են. վասն զի նախ չէ կարելի տապրացնել Բերլինի դեսպանաժողովի նշանակութիւնն և հշիռն և երկրորդ՝ որ մի և նոյն անձը չէ կարող թէ անկախ իշխան Բուլղարիայի լինել և թէ Սուլթանի պաշտօնատար, իբրև կառավարիչ Ռումելիայի։ Այդպիսի անձըն կամ պէտք է աւելի համակրէ Բուլղարիայի շահերին և գործէ ի վնաս Տաճկաստանի Ռումելիայում և կամ վերջինին աւելի համակրէ ի վնաս Բուլղարիայի շահերին։ Երկու դէպքերումն էլ պէտք է խաղաղութիւնը վտանգի մէջ ընկնի, նորանոր անրաւականութեանց և խռովութեանց պատճառով, որ կարող են ծագել վերոյիշեալ երկու պաշտօնները մի անձի մէջ միաւորելով։

Տարակոյս չկայ, որ կարիքը կոսիալ և շատ այլ այսպիսի առաջարկութիւնք անել, որով գուցէ եւրոպան հասնի մի նպատակի, զըսնելով այն միջին ճանապարհն, որ կառաջնորդէ դէպի խաղաղութիւն, որ որքան էլ ցանկալի է, բայց և այնպէս դեռ ևս հաստատ չէ։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Ամանայէն փետրվար 12/24 թուականնաւ Մէսէնճըը լրագրոյն ուղղեալ նամակ մը չատ գէչ կերպիւ կը նկարագրէ նահանգին կուսակալ Զիա փաշային վարչութիւնը։ Մէսէնճըը—իւր կողմանէ կը յարէ թէ Ամանա և Տարսոն նստող հիւպատոսաց տեղեկագրերն ալ խիստ աննպաստ են Զիա փաշային։ Մէսէնճըրի թղթակիցը կաշառակերութեան և յոռի վարչութեան ծանր իրողութիւններ կը պատմէ Զիա փաշային և անոր սատրաղրեալ պաշտօնէից վրայ։ Ժողովուրդը կը դանգատի թէ Ամանայի նահանգն երբէք այժմեան չափ յոռի կերպիւ կառավարած չէր, և թէ ներկայ կառավարութիւնը ղօչաքաղութեան ու հարստահարութեան կառավարութիւն մ՚ է միայն։ Ամեն մարդ կը զարմանայ եղեր թէ ինչպես Զիա փաչա՝ հազիւ քանի մ՚ ամիս պաշտօն վարելով՝ այնքան մեծաքանակ գումարներ ձեռք անցուցած է, որովհետև դեռ այս վերջին օրերս 4,000 ոսկի ղրկեր է կ. Պոլիս։

Մէսէնճըրի թղթակիցն իւր երկար նամակին մէջ Զիա փաչային խիստ զարմանալի և միանգամայն ցաւալի մի գործը կը պատմէ, զոր Մէսէնճըը և իւր թղթակիցը վանդալութիւն կը կոչեն։ Տարսոնի չուրջը Հռովմայեցիներէն մնացած երկու գուռներ կային, որք հնութեան գեղեցիկ և հաստատուն յիշատակարաններ էին։

Այս գուռներէն մին Տէմիր գաբու կը կոչուէր, և Ամանայի ճամբուն վրայ էր. միւսը Խանճը գաբու կը կոչուէր և Մերսինի ճանբուն վրայ էր։ Զիա փաչան Տարսոնի գամգամին հրաման կը ղրկէ որ յիշեալ երկու գուռներն ամրիջական քանդելին և քարերը ճանբանեըուն ու կամուրջներուն չինութեան գործածուին։ Բայց Տարսոնի մէջ քարին գինը չատ թէժ է, և կրնայ պէտք եղած քանակութեամբ ճոխ բերել աւելի նուազ ծախքով քան թէ հնութեան այդ երկու յիշատակարանները քանդել տալու համար մեծ ծախք ընելով։ Գայմագամը զորձաւորներ կը ղրկէ, որ յիշեալ գուռները քանդել սկսին։ Զայս լսելով Ռուսիոյ, Ամերիկայի, Գերմանիայի և Պարսկաստանի հիւպատոսք Գայմագամին քով կերթան և կը յայտարարեն թէ քաղաքակրթութեան չհնուն համար այդ յիշատակարանք անվիճար պէտք է պահուին, և կըսեն թէ կառավարութեան պէտք եղած քանակութեամբ քար կրնան գտնել իրենք և թէ պատրաստ են այդ մասին պէտք եղած գումարն ալ իրենք վճարելու։ Գայմագամը Զիա փաչային կըգրէ. իսկ նա իւր առաջի հրամանը սաստկութեամբ կը կրկնէ։ Այն ժամանակ գայմագամն ալ կառավարութեան բոլոր պաշտօնէից և ոստիկանաց ընկերակցութեամբ քաղաքէն դուրս կելնէ և ի ներկայութեան խուռն բազմութեան մը Տէմիր գափուլ գուռն հանդիսիւ կը քանդուի. Մէսէնճըրի թղթակիցը կըսէ թէ միւս գուռն ալ ի մօտոյ պիտի քանդուի, մէթ օտար միջամտութեամբ մ՚ առաջքը չառնուի։

Մասիս։

Կիւրակի ամսոյս 18-ին Թիֆլիզի փոխադարձ վարիչ ընկերութեան ընդհանուր տարեկան նիստն էր։ Ներկայ էին 324 անձինք, որոնք ունէին նաև 227 հոգուց ստացած ձայնի իրաւունք. ուրեմն բոլոր ձայների թիւն էր 551։ Մեծ վիճաբանութիւններ յարուցուեցաւ հաշուի հաստատութեան համար, որ ի վերջոյ՝ բազմութեամբ 351 ձայների ընդդէմ 200-ի ընդունուեցաւ. ընդունուեցաւ նոյնպէս և առաջարկած նախահաշիւը 324 ձայնով։ Ի տեղի հրաժարեալ պ. Մ. Թամամչեանի վիրեկտոր ընտրուեցաւ պ. Ա. Ծովհաննիսեանը բազմութեամբ 394 ձայների. իսկ խորհրդի անդամ — պ. պ. Գուրգինբէգեանը (297 ձայնով) և Ա. Բաբանեանը (318 ձայնով)։ Փոխնէ յանձնաժողովի անդամներ ընտրուեցան՝ Գ. Ցուրինեան (366 ձայնով), Ա. Խանանկա (363 ձայնով) և Ս. Շահղինարեան (315 ձայնով)։

—

Սուդբնի պրիստավ պ. Յ. Գրիգորեանցը ընծայել է Շարուր — Դարալագեազ գաւառի խաչիկ գիւղի ծխական դպրոցին 1. Разсказы о животныхъ и растеніяхъ А. Разина և 2. Атлантичискій Океанъ (разсказы для дѣтй) Циммермана գրքերը։ Դպրոցի հոգաբարձութիւնը յայտնում է պարոնին իւր շնորհակալութիւնը։

—

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ պ. Ա. Երիցեանցից նորա երկասիրութիւնը Чума въ Закавказіи.

—

Լսում ենք, որ առաջիկայ ուրբաթ և չաբաթ օրերը 23-ին և 24-ին ամսոյս պ. Ա. Երիցեանցը պէտք է հայերէն լեզուով դասախօսի արհեստաւորաց ժողովի դահլիճում։ Դասախօսութեան նիւթը նոյնն է, որոյ վերայ ամսոյս 11-ին դասախօսեց պ. դոքտոր Գ. Արծրունին։

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ։

Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

ՆԵՐԿԱՅ 1879 ԹՈՒԱԿԱՆԻՆ

ՄԵԼՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐՔ

կը հրատարակվի նոյն ուղղութեամբ և պրոգրամմայով

ՇԱԲԱԹՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

ԹԷ ԹԻՖԼԻԶԻ ԵԻ ԹԷ ՕՏԱՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԵԻ ԳԻՒՂԵՐՈՒՄ. ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է 8 ՌՈՒԲԼԻ

Թիֆլիսում ստորագրվել ցանկացողք կարող են դիմել. 1) ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ, որ գտնվում է Ս. Վարդանեանի տանը, հեռագրական կայարանին կից. 2) պ. Զաքարիա Գրիգորեանցի ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ, Միխայիլովսկի կամուրջի մօտ պ. Զօրաքաղովի տանը, Լոնդոն հիւրանոցի տակ. 3) պ. Հայր. Էնֆիաճեանցի ՆԽԱԽՈՏԻ ԹԱՆՈՒԹՈՒՄ, Դվորցովոյի փողոցի վերայ, Արծրունու գալէրէում եւ 4) պ. Շահվերդեանցի Լրագրական գործակալութեամբ.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել խմբագրատուն հետեւեալ հասցէով՝

Въ редакцію Армянской газеты „ПЧЕЛА АРМЕНИИ“ въ Тифлисѣ.

ՆՈՐ ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆ

“ՆՈՒԷՐ ՔԵՇՍԻՔ ԳԵՂԸՑԻՆԵՐԻՆ”

Չափը 15 կոպ. ծախվում է կենդրոնական և Զաքարի Գրիգորեանի գրավաճառանոցներում։ Չարիւրներով առնողներին կվճարի 20% զիջում, եթէ դիմեն դէպի հեղինակը այս հասցէով.

Тифлисъ. Григорію Тер-Меликсетову, въ Сололакахъ на Сололакской улицѣ. въ д. Михаила Галустова подъ № 110

Գրիգոր Տէր Մելքիսեդեկեան։

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 21-го МАРТА 1879 г.

Типографія Амб. Эинфіаджянцъ и К-

Տուն Բժշկապետ Մ. Ռոտինեանց։